Սիպիլ

Մտածումներ

Թո՛ղ անարգեն որքան կ՝ուզեն քեզ մարդիկ,
Դուն կա՛ց, մնա՛ հաղթ, անսասան զերթ մարտիկ,
Ցորչափ հոգվույդ աչքերուն մեջ առանձին,
Կրնաս հարգանք պահել հանդեպ քո անձին:

⁂

Եթե չըլլար ամպ ու խավար,
Լույսն անհուն մեզ սիրելի պիտ՝ ըլլա՞ր.
Եթե չըլլար արցունք ու սեր,
Քերթողն իրեն տաղերն ի՞նչպես պիտ՝ հյուսեր:

⁂

Ծաղիկ մ՚է կ՝ըսեն, կյանքը վաղանցուկ,
Ես՝ «Փուշ մ՚է» կ՝ըսեմ, ծաղկի տակ ծածուկ.
Թե կ՝ուզես մատերդ չարյունոտին հար,
Մի՛ ըլլար թույրի, բույրի սիրահար:

⁂

Ձյուն, ճառագայթ, շիթեր ցողի,
Կարկուտ, մրրիկ, ձյուն հանկարծ
Կուգան կ՚երթան ամեն տարի,
Միայն մեր կյանքն է անդարձ: